

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2013 թ. սեպտեմբերի 23-27-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և մարդահամարի և ժողովրդավարության բաժնի 2-րդ կարգի մասնագետ Ս. Ազատյանը մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Ժողովրդագրություն, մշտադիտարկում և գնահատում» խորագրով դասընթացին,
- ✓ 2013 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի խորհրդատվական հանձնաժողովի նիստին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները Հայաստանում ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում» ՄԱԶԾ-ԵՄ ծրագրի մեկնարկային աշխատա-ժողովին,
- ✓ 2013թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «2014թ. հունվարի 1-ից իրականացվելիք աշխատուժի ընտրանքային հետազոտություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Առաջընթացի հաշվետվություն և հետագա քայլերի քննարկում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք.Երևանում կայացած Աղետի կառավարման խմբի հանդիպմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ժողովրդագրական մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովին,

- ✓ 2013թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մարդկանց թրաֆիկինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագծի քննարկմանը և Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման տրամադրման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված կարգի քննարկմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում» հետազոտության արդյունքների քննարկմանը,
- ✓ 2013թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրական բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի կամնանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ներկայացվելիք զեկույցի քննարկմանը,